# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 3.1 կետի պահանջներով,

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝***

1. ***Պալատի մարզային համակարգողների և մարզերի քաղաքների պատասխանատուների թեկնածուներին գրանցելու, քվեարկությունները կազմակերպելու և քվեարկությունների (ընտրությունների) արդյունքներն ամփոփելու նպատակով կազմավորել մարզային հաշվիչ հանձնաժողով՝ երկու տարի ժամկետով:***
2. ***Մարզային հաշվիչ հանձնաժողովի անդամներ նշանակել փաստաբաններ Ապետնակ Պողոսյանին (արտոնագիր թիվ 961), Քրիստինե Նշանյանին (արտոնագիր թիվ 1239) և Տաթևիկ Շալջյանին (արտոնագիր թիվ 1736):***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել հաշվիչ հանձնաժողովի նորանշանակ անդամներին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**15 հունիսի 2016թ.**
**թիվ 188-Ա**
**ք. Երևան**